

18850

ԱՐԱՆԵՆԻԿ
ՂԱՍՅԱՆ

Լաւրական հոսքեր



ԱԶԵՐՆԵՐ

Բազմ. 1937



891.39

ՎԱՐՍԵՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

Ա-46

28 JUL 2005

19 NOV 2010



ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈՒՅՔԵՐ

Ա. Զ. Ե. Բ. Ն. Ե. Ծ. Բ.
Բ Գ Մ Լ — 1937

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԻՔ

«Մայրական հույզեր» վերադարձնողները կրող իմ այս գրքը-ընդհանուր գեղարված բանաստեղծությունների հիմնական թեման է մայրական սերը դեպի իր զավակը: Դա այն մայրական սերը չէ, վորը խառն է դառնություն թուլանով, այն սերը չէ, վոր ծննդով է մանկան հետ միասին, նրա դժբախտ մոր սրտում կապիտալիստական աշխարհի անյուր շահագործման յենթակա և ծանր կտրիքի ճիւղաններում դեգերող ծնողի սրտում:

Հայտնի չէ, վոր ներկայումս արյունոտ Փաշինգի յերկրներում խրոնիկական յերևույթ է դարձել այն, վոր գործադրկութան մատնված, որվա ապրուստից զուրկ, քաղցի ու տանջանքի գերի մարդիկ վոչ միայն խուսափում են ծնող լինելուց, այլ և ծայրաստիճանի հուսահատության վիճակում վերջ են դնում նախ իրենց հարազատ յերեխաների և ապա իրենց կյանքին:

Իսկ մեր յերկրում, սոցիալիստական յերջանիկ հայրենիքում Ստալինյան որներով լիովին ազատ ու ապահոված մայրը՝ լի խորը հավատով դեպի վաղվա որը, ուրախ է ու հպարտ իր մայրական սիրով, իր մանուկներով առույգ ու կայտառ:

Մի շարք բանաստեղծությունների մեջ յես աշխատել եմ արտահայտել մեր մայրերի առողջ հույզերը, նրանց մայրական սերն ու գգվանքը, նրանց կենսաբախությունն ու լավատեսությունը: Մի շարք այլ բանաստեղծությունների մեջ այդ բոլորից բացի աշխատել եմ սույն տալ մեր խորհրդային յերջանիկ մայրերի նաև քաղաքացիական հույզերը, նրանց պարտքի գիտակցությունը Սոցիալիստական հայրենիքի հանդեպ.—մեծացնել ու դաստիարակել իրենց զավակներին խորհրդային հայրենասիրության վոգով՝ նվիրված ամբողջ աշխարհի աշխատավոր մարդկության վերջնական ազատագրման սուրբ գործին:

Թե վորքան է հաջողվել ինձ արդարացնել առաջադրած նպատակս, թողնում եմ ընթերցողին

ՀԵՂԻՆԱԿ



59333-66

Պատ. խմբագիր Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Շապիկը ՃԳՆԱՎՈՐՅԱՆԻ

Հանձնված է տպագրության 7/V-37
Ստորագրված է տպագրության 5/V-37
Տպագրության թերթերի թիվը 1/32
Դրավիտ № 2908
Պատվեր № 359
Տիրաժ 2000

Azərbaycır mətbəəsində basıldı, 26-lar adıyla „Kitab Sarajı“
Bakı Əli Bəyramov kycəsi.

ՅԵՐԱԶ ՄԱՆՈՒԿՍ

Նորագարդ զարնան բողբոջ ծաղկի պես,
Յերազ մանճուկս ե արգանդս զուգել.
Ժպտուն ու կայտառ, թիթեռնիկ կասես
Պարճւմ ե անվերջ, անվերջ, անարգել...

Գիշեր ու ցերեկ անհանգիստ, անքուն,
Քաղցր յերկրուղից սիրտս ե դողում.
Ինձ համար դեռ մութ յերկունքը դժգույն
Սիրաշող կյանքիս, արցունք ե մաղում...

Յես մայր պիտ լինեմ... Ո՛ր մայր սիրասուն,
Զարին ու բարուն ընդառաջ վազող.
Անբիծ արբունքիս պտուղը հասուն,
Աշխարհ պիտի գա, աշխարհը ծաղկող...

1921 թ.

ՍԴԱՍՈՒՄ

Վոսկեկամար որորոցդ զարդարել,
Սպասում եմ, սպասում եմ քո գալուն.
Սերս ճամբիդ ջան եմ շինել ու վառել,
Սպասում եմ քո ինձ անուշ ժպտալուն:

Թաթաշորդ պատրաստել եմ մետաքսից,
Կապիշներդ՝ ծաղկանկար դառաբարից.
Լալ ու զմրուխտ, փրփուր մարգրիտ ու հակինթ,
Մանյակ շինել փակցրել եմ կամարիդ:

Ու ամեն որ, ամեն գիշեր անհամբեր,
Սպասում եմ, սպասում եմ քո գալուն.
Դու իմ կյանքի ջերմ արևն ես հուսաբեր,
Սպասում եմ, քո ինձ քաղցր ժպտալուն:

1921 թ.

ՅԵՍ ՄԱՅՐ ԵՄ ԴԱՌԵԼ

Թողած վաղեմի խենթութիւնսս վողջ,
Յես մայր եմ դառել, գթոտ ու բարի.
Աղջիկ որերիս հույսերը բողբոջ՝
Լոկ անց ու դարձն ե մարդկանց, աշխարհի...

...Գարունը, վորի ծաղկելն ինձ համար
Խրախճանք եր միշտ յերգի ու պարի,
Հիմա իմ գիրկն ե դառել արևառ
Գարունը պայծառ, բույր ու համբոյութի...

Ել չեմ կարոտում արևի ժպտին,
Իմ յերեսայի ժպիտն եմ սիրում.
Նրա մանկական խաղերն իմ սրտին
Ծաղկունքից անուշ գյուլթանք են բերում...

Այնպես քաղցր ե, ու այնպես թովիչ
Յերգն որորոցի՝ յերբ յես եմ հյուսում,
Յերբ իմ մայրական շուրթերովն անքիծ,
Նանիկ եմ ասում, արթուն յերազում...

Արբում եմ շնչից իմ յերեսայի,
Ու կամքս տալիս նրա հաճույքին.
Ձե՛ վոր յես մայր եմ գթոտ ու բարի,
Մոր սերն եմ սիրում, սէրը կաթոգին...

1921 թ.

ՊԱՐՈՒՐՈՒՄ ԵՄ

Պարուրում եմ քեզ ու սեղմում կրծքիս,
Փայում—փայփայում սրբության նման.
Ու միշտ որհնեցում ,վոր լինես կյանքիս
Հուսաշող այգը հավետ խնդության...

Այնպես եմ հրճվում, յերբ ժպտում ես ինձ,
Քնքուշ մատներով կրծքիս հետ խաղում,
Արբում եմ քաղցր քո գեղգեղանքից,
Ու անբիժ կաթով շուրթերդ ցողում...

Յերբ նայում ես ինձ, ջինջ աչերիդ մեջ,
Հոգիս եմ տեսնում, բյուրեղից-բյուրեղ,
Սիրտս կյանքիդ դեմ դողում ե անվերջ,
այնպես եմ սիրում ծիծաղդ անմեղ...

Հզոր եմ զգում աշխարհում ինձ յես,
Վոր կարող յեղա վառել մի արև.
Վեհ բարձունքներում ճախրող արծվի պես
Տարերքի գարկը կրեցի թեթև...

Սիրում եմ յես քեզ ու քեզնով ապրում,
Իմ սիրուն ծաղիկ, իմ անուշ բալա.
Իմ այս կրակոտ, ջահել որերում
Քեզ եմ որհնեցում, իմ կարմիր լալա...

1921 թ.

ԱՂՋԻԿՍ ԲՆԲՈՒՇ

Աղջիկս քնքուշ,
Աղջիկս անուշ,
Ճերմակ շուշանի
Նման նազանի...

Յերկնքից ել լուրթ,
Աչերը կապույտ.
Թովշություն ունի,
Բողբոջ գարունի...

Ամեն ժպիտն ինձ,
Թանգ ե իմ կյանքից.
Նա իմ խնդության
Արևն ե ավլան...

Յերբ դիրկս եմ առնում
Ու կրծքիս սեղմում
Թվում ե թե ինձ
Ել չունեմ թախիծ...

Հավետ անտրտում,
Սիրտս ե խնդում:

1922 թ.

ԱՆՈՒՇ ԲԱԼԻԿ

Քնքուշ ու փափլիկ,
Իմ անհւշ բալիկ.

Խոր ծով ու ծիծաղ,
Աչերիդ մատաղ,

Միշտ դժու կաց ինձ մոտ,
Իմ հր արևոտ...

Յերբ իմ ջերմ գրկում,
Քնած ես լինում,

Ծիծաղից բացի,
Ձեմ փնտրում լացի

Յեվ վնչ մի ուղի,
Ուր անձրեւ մաղի...

Որորը շուրթիս,
Առնում թեւերիս,

Մեղմիկ, դուրգուրում,
Ու լուռ համբուրում,

Վոր դու չարթնանաս,
Իմ լուսե յերազ...

Միշտ դժու կաց ինձ մոտ,
Իմ հր արևոտ.

Խոր ծով ու ծիծաղ,
Աչքերիդ մատաղ.

Իմ անհւշ բալիկ,
Քնքուշ ու փափլիկ...

1922 թ.

ՄՈՒՇ-ՄՈՒՇ

Մանկիկս ե քնել,
Անհւշ ու մուշ-մսւշ.
Սիրտս ե արբել
Սիրով մի քնքուշ...

Այդ իմ նոր մանկան
Սերն ե դյուլթական,
Վոր տալիս ե ինձ,—
Մի կյանք անթախիծ...

1922 թ.

ՆՈՐ Ե ԲԱՅՎԵԼ

Նոր ե բացվել քո լեզուն,
 Ոոսո՞ւմ, յերգո՞ւմ ես անվերջ-
 Թիթեռի պես թռվո՞ւն,—
 Պար ես բռնել ծաղկանց մեջ:

Քո ամեն բառն ինձ համար,
 Մի նոր կյանք ե, նոր աշխարհ.
 Ձրկա՞ վոչինչ, վոր քեզնից
 Քաղցր լինի ու դյուլթիչ:

Նոր ես յելել դու վոտքի,
 Նոր ե բացվել քո լեզուն.
 Շող ու ժպիտն իմ կյանքի,
 Թմփլիկ ես ու սիրուն:

1922 թ.

ԶԻ ՅԵՍ ԲՇՈՒՄ

Ծնկներիս նստել դու ձի յես քշում,
 Արևն ել պատին պատկերդ ե քաշում,
 Յե՛վ յես ել քեզ հետ հրճվում եմ մեկտեղ,
 Յես ե՛լ եմ դառել մանուկ մի անմեղ:

Յես ել եմ քեզ հետ ծիծաղում անվերջ,
 Անփուլթ մի կյանք ե ծիլ առնում իմ մեջ,
 Հոգիդ իմ հոգու թևերին թառած,—
 Աշխարհն ե գրկում, աշխարհը ծաղկած:

Յես ել եմ տալիս ծափին ու ծափին,
 Ու սիրտս ձուլում քո սրտի դափին.
 Յերջանկանում եմ քո անբիծ սիրով,
 Ապրում խաղերով, անուշ տաղերով:

Ծնկներիս նստել դու ձի ես քշում,
 Արևն ել պատին պատկերդ ե քաշում,
 Ու յես ել քեզ հետ հրճվում եմ մեկտեղ,
 Յես ե՛լ եմ դառել մանուկ մի անմեղ:

1923 թ.

ԱՂՋԻԿ ՈՒՆԵՄ

Աղջիկ ունեմ, ծաղկից քնքուշ,
Խոսքեր ունի, անոռչ-անոռչ.
Ժպիտն ասու արև լինի,
Անմահ ծնունդ, բարկ կրակի...

Ինչպես անմեղ թիթեռ նրբին,
Նա յե պարում սրտիս ճամբին.
Նա յե բերում բուրող գարուն,
Հոգու թովչանք, որեր սիրուն...

Նա իմ գրկում, յես չե՛մ սգում,
Չե՛մ արտասվում, չե՛մ հեկեկում.
Բավ է, վոր տա ինձ մի համբույր,
Խի՛նդ է դառնում կյանքս պուրպուր...

Աղջիկ ունիմ, ծաղկից քնքուշ,
Խոսքեր ունի, անոռչ-անոռչ.
Մեռնի՛մ նրան, նրա նման,
Ո՞վ կվառի սիրույս քուրան...

1923 թ.

ՅԵՐԲ ՉԵՍ ԼԻՆՈՒՄ

Յերբ չես լինում մի ակնթարթ իմ գրկում,
Խենթանում եմ, խենթանում եմ քո սերից.
Քո կարոտն է մեղմ որհնեղում իմ հոգում,
Քո կարոտից մոռանում եմ ինքս ինձ:


Կարոտում եմ քո կանչերին հարազատ,
Քո խաղերին, քո բառերին նոր ընծա.
Գուրգուրանքիդ, համբույրներիդ անաղարտ,
Ծաղիկ ժպտիդ, վոր շուրթերիդ կցնծա...

Կարոտում եմ թոթով լեզվիդ մանկական,
Ձրույցներիդ, վոր վիշտ չունին տակավին.
Արցունքներիդ ջինջ շիթերին թովչական,—
Կարոտում եմ, կարոտում եմ սրտազին:

Յերբ չես լինում մի ակնթարթ իմ գրկում,
Խենթանում եմ, խենթանում եմ քո սերից.
Քո կարոտն է մեղմ որհնեղում իմ հոգում,
Քո կարոտից մոռանում եմ ինքս ինձ:

1924 թ.

59333 - 66



ՄՈՐ ՄՐՏԻ ՊԵՍ

Մոր սրտի պես սիրող սիրտ,
Ձեմ հավատում, վոր լինի,
Անբիծ հայացք ու ժպիտ,—
Ձեմ հավատում, վոր լինի:

Մոր գրկի պես ջերմ ու տաք,
Արևներն ել շող չունին,
Անբիծ համբույր յերկնի տակ,—
Մոր համբույրն ե քնքաղին:

Նրա ցավի պես տանջող,
Ցավ չգիտեմ աշխարհում,
Նրա լացի պես մաշող,—
Լաց չեմ տեսել իմ որում:

Մոր պես վոչ վոր չի ապրի,
Արծվի հպարտ թռիչքով,
Վորքան կյանքը սուգ բերի,
Նա պիտ յերկնի նոր յերգով:

Վորքան ել վոր տառապի,
Յերջանիկ ե ու սիրող,
Վորքան վոր որը ամպի,—
Բալից կառնի լույսի շող:

Մոր սրտի պես, սիրող սիրտ,
Ձեմ հավատում, վոր լինի,
Անբիծ հայացք ու ժպիտ,—
Ձեմ հավատում, վոր լինի:

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԱՂԶԻԿ

Իմ փոքրիկ աղջիկ, գեղեցիկ ու նուրբ,
Քեզ նման յես ել փոքրիկ եմ յեղել,
Քեզ նման յես ել վազել թփից-թուփ,
Անհուն հրճվանքով ծաղիկ եմ քաղել...

Քեզ նման յես ել, արևի շողքին
Թաթերս մեկնել բռնել եմ ուղել,
Սակայն, ախ, քեզ պես իմ մանուկ հոգին,
Այդ խենթ հաճույքին յերեք չի հասել:

...Ու հիմա յերբ քեզ տեսնում եմ այդպես
Իմ սիրուն աղջիկ ուրախ ու ծիծղուն,
Կարծես թե նորից մանկանում եմ յես,
Դառնում քո կյանքին, անբիծ ու շողուն:

1924 թ.

ԻՄ ՄԱՅՐՆ ԵՒ

Իմ մայրն ել մի որ ինձ ե ուրորել,
Հենց այս ուրորով ջերմ ու քնքշագին,
Ինչպես վոր այսօր յես քեզ պարուրել
Ասում եմ—քնի՛ր մանկիկ իմ անգին:

Նա յել ինձ նման, ինչպես վոր յես քեզ,
Ինձ ե փայփայել գիշեր ու ցերեկ,
Որեր ե մաշել վառ ու սիրակեզ,
Ինչպես հիմա յես,—բալիկ իմ լի յերգ:

Նա յել ինձ նման ինչպես վոր յես քեզ,
Ինձ ե նվիրել կյանքը ծաղկաղարդ.
Ինձնով ե ապրել հույսերով պես պես,
Ինչպես հիմա յես՝ բալիկ իմ զվարթ:

Ու հիմա յես ել յերբ մայր եմ դարձել,
Նոր եմ հասկանում մոր սրտի լեզուն,
Ու նոր եմ զգում, վոր դեռ չեմ սիրել
Յես այսքան խորճանկ-սիրով մի անհուն:

Յերբ արդեն դու կաս, քեզնով եմ հպարտ,
Ել վո՛չ մի ծաղկից յես բույր չեմ առնի.
Քանի վոր դու կաս, չեմ լինի վհատ,
Ել վո՛չ մի կարոտ՝ արցունք չի՛ քամի:

1924 թ.

ԲՈՒՐԱՍՏԱՆՆ ԻՄ

Այնպես հարուստ ե բուրաստանը իմ,
Անթիվ բյուրեղանգ ծաղիկներ ունիմ.
Կարմրաթուշ վարդի թփերում պահվող,
Սոխակներ ունիմ, սիրերգող, դյուլթող...

Արևներ ունիմ՝ շողերը վոսկի,
Ձկներս են լողում, ջրում լճակի,
Յերկու յերեխաս լճակի ափին,
Ուրախ ու կայտառ,—տալիս են ծափին...

Ձան-ջան եմ ասում, վազում ընդառաջ,
Թևերս բացում, գրկում ձախ ու աջ,
Փայտում փայփայում, անվերջ համբուրում
Ու չեմ հագնում, ու չեմ հագնում...

Ջույգ բալիկներիս սիրով գինովցած,
Յերջանկանում եմ, ու յերգում կամաց.
Աշխարհը իմ դեմ դառնում ե յեղեմ,
Կյանքը ան հագնում, փթթում ե իմ դեմ...

1924 թ.

ՆՈՐ ՈՐՈՐ

Յերեկվա պես քեզ չեմ ասում
Լալկան որոր, իմ բալա:

Հիմա յես իմ որորներում,
Խի՜նդ եմ հյուսում, իմ լալա:

Յերեկվա պես սե չեն հագած,
Արտն ու հանդը մեր գյուղի:

Գեղածիծաղ կյանքը ծաղկած,
Ունի պայծառ մի ուղի:

Այս որերի տաք շնչով քեզ
Որորում եմ իմ անուշ:

Վոր քնած ել արթուն լինես,
Գալիքի դեմ միշտ աշխուժ:

Վոր մեծանաս, չես տեսնելու
Տառապանքը մեր տեսած:

Գո սրտի մեջ չի լինելու,
Վնչ մի սարսափ, վնչ մի լաց:

Յերեկվա պես քեզ չեմ ասում,
Թախծոտ որոր, իմ անուշ:

Իմ զվարթուն որորներում,
Խի՜նդ եմ հյուսում իմ քնքուշ:

Դնիր-քնիր դու մոռ-մոռուշ...

1925 թ.

ԴՈՒՔ ԱՅՆՊԵՍ ԼԱՎՆ ԵՔ

Դուք այնպես լավն եք
Ու այնպես սիրուն.
Ծաղկի նման եք,—
Արևից վառուն...

Թմփլիկ ու փափլիկ
Թաթիկներ ունեք.
Քնքուշ ու մանրիկ,—
Տոտիկներ ունեք...

Աչիկներ ունեք,
Քյուրեղյա ու ջինջ.
Պաչիկներ ունեք,—
Հստակ ու անբիծ...

Յերբ ժպտում եք ինձ,
Հրճվում եմ այնպես,
Ձեր ծվլոցից—
Արքում եմ ասես...

Ձեր աշխարհն այնքան,
Հմայքներ ունի.
Այնքան դուլթական,—
Արևներ ունի...

Դուք այնպես լավն եք
Ու այնպես սիրուն.
Ծաղկի նման եք,—
Արևից վառուն...

1925 թ.

ՅԵՐԵԳ ԼԱԼԱ

Յերեք լալա,
Յերեք բալա,
 ուռիմ յես:

Անուշ խոսկան,
Յերեք սոխակ
 ուռիմ յես:

Գիշեր-ցերեկ,
Ժպիտ ու յերգ
 ե ինձ մոտ:

Խինդ ու բերկրանք,
Բաղցր մի կյանք
 ե ինձ մոտ:

Վառ, վառվռուն
Ծաղկուն դարուն
 ե գիրկն իմ:

Լաց ու կարոտ,
Որեր վշտոտ,
 ե չուռիմ...

Յերեք լալա,
Յերեք բալա
 ուռիմ յես:

Անուշ խոսկան,
Յերեք սոխակ
 ուռիմ յես:

ԳԵՂԱԿՈՒՅՈՒ ՅԵՐԳԸ

Բալիկս փոքրիկ, նստել կանաչին,
Թաթերը փոքրիկ մեկնել կակաչին,
Փետրում ե հատ-հատ թերթիկները խաս,
Ու ժպտում հանդարդ, աչքերով ավազ:

Յեվ շուրջը փոված արտերը հասկի,
Որորվում են նուրբ շրշունով հովի.
Թավիշը մախմուռ, վռոններին փափլիկ
Տալիս ե համբույր, անուշ ու մեղմիկ:

Ջան-ջան եմ ասում կյանքին իմ այս նոր,
Մանում, քաղհանում, որերս բոլոր
Կուռ աշխատանքի յերգովն եմ ճամբում,
Սիրոս լույսերի դարբնոցում ձուլում:

Բալիկս ել փոքրիկ նստել կանաչին,
Թաթերը փոքրիկ մեկնել կակաչին,
Բարակ մի ցողուն խրել թերթիկին,
Խաղում ե ուրախ, սիրուն, քնքազին:

Կարծես թե ալ գույն դրոշ լինի նա,
Վոր այսոր լի կայծ ծածանվում ե հաղթ
Մեր յերկրի վրա,— ու վաղն ել, վաղն ել
Ծածանվի պիտի՝ աշխարհի վրա:

1926 թ.

ԻՄ ԲԱՆԻԿ

Իմ նոր ծիլ ծաղիկ,
իմ փոքրիկ բալիկ...
Գարուն ու ծիծաղ,
մազերիդ թել-թել
կարմիր եմ կապել,

Ու նետում եմ քեզ,
աղակոտ կյանքի
զե՛րկը հրակեզ,
վոր դժե ել հիմի
յերգես հարաճուն
յերգը պայքարի...

Ու կանչես հնչուն
ձայնով մանկական,
վոր միլիոն-միլիոն
մանուկներ,—ուր կան,
վորոնք տառապած
ու հալածական
մայրերի գրկում,
չոր սափնքներից
սև թո՛ւյն են ծծում,—
սթափվեն մեկն:

Ու դառնան քեզ պես
սրտերով հրկեզ.
մտքի ու կամքի
դարբնոցում կոփվեն—
կոփվեն ու կարմրեն
յերկաթի նման...
Ու դառնան հաղթող
մուրճեր հարվածող,
վոր ել չը լինի
լացը մայրերի.
նրանց աչքերում—
շողա լի խնդում,—
ժպիտն արևի...
Իմ նոր ծիլ ծաղիկ,
իմ փոքրիկ բալիկ...

1927 թ.

ԳԵԶ ԵՄ ՀԻՇԵԼՈՒ

Վորքան ել վոր դու մեծանաս բալաս,
Ելի իմ փոքրիկ ջանիկս ես քնքուշ.
Մի որ ել թեկուզ ինձնից հեռանաս...
Քեզ եմ հիշելու—անունդ անուշ:

Թե յերգերիս մեջ, թե զրուցելիս,
Դու կաս, ու քեզնից եմ պատմում անվերջ.
Որերի զրկում, լալիս խնդալիս,—
Դու յես ալաւում հույզեր սրտիս մեջ:

Թե աշխատանքի քրտինքում թաղված,
Թե ծաղիկների շոյանքին գերի,
Նորից դժւ յես, դժւ, քեզնով եմ արբած
Իմ սիրճւն բալիկ, այս վառ որերի:

1928 թ.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿ ԻՄ ԲԱԼԻԿ

Հոկտեմբերիկ իմ բալիկ,
Այդ ինչ լալի ես, ինչ լալի ես.
Հագիդ վարդից ալ շապիկ,
Ծլլում ես ծախ պես:

Քայլում ես աջ, քայլում ձախ,
Ասում յերգեր հրավառ.
Շուրթիդ ժպիտ ու ծիծաղ,
Դու իմ փոքրիկ թմբկահար:

Քո այդ թմիլիկ թաթերով,
Զարկ, թող թմբուկդ թնդա.
Անցիր կարմիր շարքերով,
Մանուկ սիրտդ թող խնդա:

Դու ծաղիկն ես որերի,
Մաման մատաղ այդ բոյիդ.
Հույսն ու լույսն ես նոր էյանքի,
Մաման մատաղ արերիդ:

Հոկտեմբերիկ իմ բալիկ,
Այդ ինչ լալի ես, անուշն ես,
Հագիդ վարդից ալ շապիկ,
Ծլլում ես ծախ պես:

1929 թ.

ԶԱՐԹՆԻՐ ԳՆԻՅ

Զարթնիր քնից իմ բալա,
Հենց նոր դարձա հանդից տուն.
Բերել եմ քեզ փունջ լալա,—
Բաց աչերդ այդ խնդուն:

Զարթնիր առնեմ գիրկս քեզ,
Սեղմեմ կրծքիս ջերմագին,
Համբույրներով արևկեղ,—
Քեզ փայփայեմ քնքշագին:

Կես որն արդեն զլորվել,
Արևը թեքվել ե, տե՛ս,
Վորքան յերկար ես քնել,—
Կարոտել եմ արդեն քեզ:

Մաման քեզնով միշտ խնդուն
Բերել ե քեզ փունջ լալա.
Բաց աչերդ այդ ժպտուն—
Զարթնիր քնից իմ բալա:

1931 թ.

ԴՈՒ ՅԵՐԶԱՆԻԿ

Դու յերջանիկ իմ բալա,
Ծնված յերկրում այս լալա.
Դիրկդ ես բացել արևին,—
Ծաղիկներին ու հովին:

Ամեն անգամ ժպտալիս,
Դու ինձ նոր կյանք ես տալիս.
Մեռնիմ շողուն աչերիդ,
Հստակ ու զիլ կանչերիդ:

Քեզնով հալարտ իմ սրտում,
Վարդի նման ես փթթում.
Դու յերջանիկ իմ բալա,—
Ծնված յերկրում այս լալա:

1932 թ.

ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐ

Մանուշակներ կապուտաչյա,
Նման եք դուք իմ աղջիկան,
Սյնալես անուշ—քնքուշ այնքան,—
Նման եք դուք իմ աղջիկան:

Արշալույսին վոսկեզանգուր
Ձեզ ե ժպտում շնոյն առաջին.
Ձեզ ե գրկում ցոյցն առաջին,—
Արշալույսին վոսկեզանգուր:

Հովն ե բերում ձեզ ներս անուշ,
Վոնց յես իմ լավ սիրուն մանկան.
Նման եք դուք իմ աղջիկան,—
Մանուշակներ նուրբ ու քնքուշ:

1932 թ.

ԻՄ ՅԵՐԵԽԱՆ

Խշշում ե ուռին,
Ու առուն զնգում.
Հովին ավերին՝—
Մեղմիկ շնգշնգում...

Ու իմ յերեխան
Ժպտում ե անփուլթ,
Խաղում ե անձայն,—
Ջրի հետ կապույտ...

Գլորվում են լուռ
Գարերը մանրիկ:
Մամուռը, մախմուռ,—
Դողում ե մեղմիկ...

Ու իմ յերեխան
Ժպտում ե անփուլթ,
Խաղում ե անձայն,—
Ջրի հետ կապույտ...

1932 թ.

ԳՆԻՐ ԱՆՈՒՇ

Քնիր անուշ, սիրուն բալաս,
Քնիր, վոր դու շուտ մեծանաս.
Հոկտեմբերյան շողերով վաւ
Պարուրում եմ, ասում որո՞ր...

Ուզում եմ դու մեծ մարդ դառնաս,
Հաղթ կոմունար լինես, բալաս.
Քսանվեցի ճամբով բոսոր,
Քայլես անպարտ... որո՞ր - որո՞ր...

Մութ ավերին այն հեռավոր,
Վառես քուրան մե՛ծ Լենինի.
Վոտքի հանես աշխարհն ի մի.—
Իմ լավ բալիկ, քեզ նոր-որո՞ր...

Քքիր-քնիր դու մոռ-անո՞ւշ,
Կյանքը քեզնով ե միշտ անուշ.
Քնիր բալաս, կարմիր լալաս,
Ասում եմ քեզ, յես նոր-որո՞ր...

1933 թ.

ԻՄ ԱՂԶԱՆ

Սարիղային

Իմ փոքրիկ աղջիկ, սեպյա ու ժիր,
Դու հիմա հեռու-հեռու մեր գյուղում,
Շրշյուն հովերի յերգին ունկնդիր,—
Ծաղիկ ես քաղում, ծաղիկ հետ խաղում...

Դու հիմա դալար ուռիների տակ,
Վազ-վազ ես անում վոտներով բորիկ,
Ուր կարկաչում են առուներն հստակ,
Ու մեղմ համբուրում թաթերդ փոքրիկ...

Մորի յես քաղում թափուտ անտառից,
Թարմ ու սիզապատ լանջերից ձորի,
Ուր կոլեկտիվի վոսկի արտերից,—
Հսկում ե անուշ յերգը հնձվորի...

Ուր կալսիչներն են աղմկում թափով,
Բարձրանում դեղին դեզը ցորենի.
Բերկրում ե անցնում ամենքի սրտով,—
Հսկում պիոներ յերգը լագերի...

Իսկ դու, յես գիտեմ, թիթեռների հետ,
Խենթ պար ես բռնել շուրջը վարդենու.
Ժպիտն ե թառել շուշան շուրթերիդ.—
Իմ արև աղջիկ, արևից վառուն...

1934 թ.

ԻՄ ՄԱՆԿԱՆ

Դու իմ գանգրահեր, իմ փոքրիկ մանուկ,
Յես քեզ յերկնել եմ մարտերում արնոտ,
Մշուշասքող որերին տամուկ,—
Յերբ յերկիրը իմ՝ շնչում եր վառող...

Ուր մարդու միտքը ել թռիչք չունեի,
Կյանքը մահերգ եր հյուսում ամենուր,
Աշխարհը ասես անշող մի գիշեր,
Գրկած հազար տակ թախիժ ու մրմուռ...

Յեւ վոնց կարուսել հողմերի շնչում,
Պտտվում եյին որերն արնաներկ,
Որորցիդ մոտ քամին եր շաչում,
Դամին սովալլուկ,—մուրացիկ մի մերկ...

Դո ժպիտն եր լոկ սփոփանքը իմ,
Դեղգեղանքդ եր ինձ բերում թովչություն,
Դեզ եյի զգում միակ մտերիմ,
Թափառումներիս ճամբեքին տրտում...

Իմ որորներում այնքան քնքշագին,
Թախիժն եր փռել թեւերն արցունքոտ,
Իմ համբույրներում այնքան ջերմագին,
Կար անդորր կյանքի մի անհո՛ւն կարոտ...

Դարը-դարի դեմ կռիվ եր մղում,
Փոթորիկներում մի սոսկումնալի,
Բռնությունն արնոտ անձրև եր մաղում,—
Որերի գրկում, պայքարով հղի...

Յեւ դու իմ սիրուն, իմ անուշ մանուկ,
Ձեյիբ զգում խոր տառապանքն հոգուս,
Դու չեյիբ զգում քեզ խորթ ու ստրուկ,
Խեղկատակ կյանքի բավիղում անլույս...

Դու անհող եյիր, ու զվարթ այնպես,
Ինչպես վաղորդյան շողը արևի,
Դալարում կաթած արծաթ ցողի պես
Հստակ եր հողիդ՝ նման բյուրեղի...

Ձե վոր դու փոքրիկ,—փոքրիկ եյիր, շատ,
Ձեյիբ հասկանում դու և վնչ մի բան,
Դժվար եր պատմել քեզ անց ու դարձից,
Ու հալածանքից մթին ու դաժան...

...Ու հիմա յերբ դու արդեն մեծացել,
Կանգնել ես իմ դեմ փողկապով կարմիր,
Դո լուսասքող աչքերում այդ բիլ,
Տեսնում եմ յերկրիս վերելքը կարմիր:

Թռիչքներ ունես այնպես հրահրուն,
Մտքեր խորիմաստ ու կամք պայքարող,
Դու իմ ճնծաղիկ, բերել ես գարուն,
Ժպիտ ես փռել սրտերում լացող...

Դո հայացքն՝ բուս այնքան դյուրթական
Արևշող կյանքի թովչանքն եմ տեսնում,
Դո խոսքերի մեջ վառ ու հաղթական—
Իմաստուն մարդու՝ պատգամն եմ կարդում...

Դու աճում ես վոնց յերկիրը իմ նոր,
Յերանգված լույսով արշալույսների,
Դու շնչի ես տալիս յերգերիս բոսոր,
Ինչպես բույսիկ հողին իմ դարի...

Ել չեմ գրկում քեզ վիշտ ու արցունքով,
Ու չեմ փայփայում խոսքերով լալիան,
Միտս ե բաբախում քո այդ նոր կյանքով—
Իմ փոքրիկ հերոս—դու արեգական...

....Յեւ այսպես դու իմ գանգրահեր մանուկ,
Յես քեզ յերկնել եմ մարտերում արնոտ,
Դո պայքարներում, որերին տամուկ,—
Յերբ յերկիրն իմ՝ շնչում եր վառող...

ԻՄ ԾԱՂԻԿՆԵՐ

Վոսկեզանգուր, արևադեմ,
Վոսկեշող իմ ծաղիկներ.
Ձեզ փայփայել, գուրգուրել եմ,
Քանի՜ որ ու գիշերներ...

Յերգ եմ հուշսել, որոր ասել,
Յես ձեզ համար քնքշագին.
Ձեր անաղարտ գիրկն եմ նետել
Վեր խոյացող իմ հոգին...

Ձեր այդ մախմուռ, բիւ աչերից,
Համբույր քաղել թովչական.
Ձեր այդ թմրիկ թաթիկներից —
Քաղել բուրմհւնք դուլթական...

Ձրուցել եմ ձեզ հետ այնքան,
Ձեր իսկ լեզվով մանկական.
Մանուկներ իմ վոսկեզանգուր —
Ծաղիկներ իմ դուլթական...

1935 թ.

ՄՏԵՐԻՄ ԽՈՍՔԵՐ

Հինդային

Ել թիթեռի պես դու չե՛ս թրվում, թռչկոտում վետ-
վետ.

Որվա հարցերից, կյանքից ես հիմա դու խոսում
ինձ հետ:

Քո այն մանկական աչերում թովիչ, բյուրեղյա այնքան
կա իմաստութուն մի խորախորհուրդ ու
հավերժական...

Պարզ ու հմայիչ քո ժպիտներում կա ուրիշ մի շող.
Արևից այրող սիրո նիզակներ՝ սրտերը մաշող...
Նուրբ ու անուշգեղ քո նորափթիթ շուրթերի վրա —
Հասուն մրգերի գինին ե փրփրել-բուրմուռնովն իրա...
Ծաղիկն ե բացվել այտերիդ մախմուռ ու շուշանակերտ.
Վարդին հանգունակ, դու իմ նո՛ւ աղջիկ, պոետիկ
ու խենթ...

Քո այն անուշիկ գեղգեղանքն հիմա փոխվել ե յերգի,
Դու ինձ որերի հեքյաթն ես պատմում ոխթմով նվագի...
Դու ինձ հետ ընկեր ու քույր ես դարձել մտերիմ ու
մոտ,

Ել յես չեմ դուռ սիրտս ակոսող և վո՛չ մի կարոտ...
Ակնթարթը ինձ չի թվում տարի, չեմ թախծում ել
յես,

Քեզ հետ եմ ապրում վերելքը յերկրի՝ դուլթական
այնպես...

Քո այն թմրիկ թաթերը, վոր կար ծաղիկներ փնջող,
Ակորդների հետ են խաղում հիմա՝ արևն անընդ...
Ու չե՛մ հավատում աչքերիս հաճախ այդ յե՛րբ մեծա-
ցար,

Յերանգ ե թվում քո անցած ուղին՝ վառուն ու պայծառ...
Որվա հարցերից, կյանքից ես հիմա դու խոսում ինձ
հետ,

Վարդին հանգունակ դու իմ նո՛ւ աղջիկ, պոետիկ
ու խենթ...

1935 թ.

ԻՄ ԼԵՅՏԵՆԱՆՏԻՆ

Վանդիկի

Հենց վոր մի որ մաղերիս սաթ
Իջնի փոշին արծաթյա,
Դու կդառնաս հաղթ լեյտենանտ
Իմ այս յերկրում արեկա.
Դու իմ սրտում բացված վոնց վարդ՝
Ժպիտներով բյուրեղյա...

Պիոներ ես դու հիմա դեռ—
Ծաղկի նման ես փթթում.
Արևի դեմ վոնց վոր թիթեռ,—
Թրվում ես լի խնդում,
Ու իմ հոգում վառում լույսեր,
Շող ու կայծեր անհատում...

Դու ջրի գիլ կարկաչն ունես,—
Ծիծաղներում քո անուշ.
Դու աստղերի հմայքն ունես—
Հայացքներում քո քնքուշ.
Մանուշակի բարմունքն ունես—
Անմահական՝ հոգր ուժ...

Հենց վոր մի որ մաղերիս սաթ,
Իջնի փոշին արծաթյա,—
Յե՛վ դու դառնաս հաղթ լեյտենանտ,
Իմ այս յերկրում արեկա,—
Կհամբուրեմ ճակատդ վարդ,
Բազուկներդ յերկաթյա:

Ու կպատմեմ յես քեզ անցած
Այն ուրերից արցունքոտ,
Ուր մարդու միտքն եր քարացած—
Հոգու յերկինքը՝ միգոտ...
Աշխարհն արնով եր հագեցած,
Կյանքը մոայլ ու անդոհ...

Քեզ մայրերի այն լալազին
Տառապանքից կպատմեմ,
Վոր որերին հալածազին
Հե՛վում եյին հողմի դեմ...
Վոնց վոր տերև՝ չոր մայթերին—
Մեռնո՛ւմ եյին դալկադեմ...

Նրանք իրենց գինվոր բալին
Սուգ-շիվանով են ճամբել,
Իրենց ծաղկուն սրտի խալին—
Ցավով ձիուն են թամբել...
Աչքեն հառել դարձի ճամբին,
Ու ծաղկի պես թառամել...

Սակայն յես քեզ, բալիկ իմ վարդ,
Արցունքներով չեմ ճամբի.
Գիտեմ, վոր քո աշխարհն ազատ,—
Լույսերով ե լի հիմի,
Ու հինգթևյան աստղն անպարտ,—
Ճակտիդ հպարտ պիտ բազմի:

Հենց վոր մի որ մաղերիս սաթ,
Իջնի փոշին արծաթյա,—
Դու կդառնաս հաղթ լեյտենանտ,
Իմ այս յերկրում արեկա—
Կհամբուրեմ ճակատդ վարդ,
Բազուկներդ, յերկաթյա:

1935 թ.

Մանուկներ, մանուկներ կան այնքան,
Շիկահեր ու սևաթ մազերով.
Ծաղիկներ, ծաղիկներ դյուլթական,—
Արևկա ու ժպտուն աչերով:

Յես նրանց հայացքում բյուրեղյա,
Խնդությունն եմ տեսնում որերի.
Լալազար ու պայծառ գարունքով—
Շող աշխարհն եմ տեսնում բույրերի:

Չեն տեսել, չեն տեսել նրանք ցավ,
Վոնց վոր յես, իմ մանուկ որերին.
Չեն շրջել, սար ու ձոր մոլթ անձավ—
Չեն լացել հողմահար ճամբերին...

Չեն լսել հառաչանք ու կական,
Մահերգներ ու կանչեր լալազին.
Չեն լսել հեքյաթներ խոլական—
Լեզենդներ սիրտ մաշող, տխրազին...,

Յես նրանց հայացքում բուրեղյա,
Խնդությունն եմ տեսնում որերի,
Լալազար ու պայծառ գարունքով—
Շող աշխարհն եմ տեսնում բույրերի...

Այս աղատ, լուսեղեն իմ յերկրում,
Ո՛ր, սիրում, ու յերգում եմ նրանց,
Մոր նման ամենքին գուրգուրում,
Փայփայում քնքշանքով մի անանց...

Մանուկներ, մանուկներ կան այնքան,
Շիկահեր ու սևաթ մազերով.
Ծաղիկներ, ծաղիկներ դյուլթական—
Արևկա ու ժպտուն աչերով...

1936 թ.

Ձեր այդ ցավատանջ տառապանքը խոր,
Մենք ել ենք զգում ու տալում ձեզ հետ.
Չե՞ վոր այն արնոտ որերին դաժան
Ձեզ նման մենք ել կրել ենք զրկանք...

Հարվածների տակ մոլի բռնության,
Արցունք ենք թափել ու լացել այնքան...
Լսել ենք տխուր, սրտամաշ մահերգ,
Շղթաների խուլ զնգոցն ենք լսել.

Բանտ ու կախաղան ենք տեսել վորքան,
Յեվ հալածել են ձեզ նման մեզ ել...

...Ու տառապանքով պայքարել ենք մենք,
Մինչ հոկտեմբերն իր արևն է վառել.
Յավից գոսացած սրտերում բեկ-բեկ,
Գարունն իր վոսկի ծաղկունքն է փռել...

Յեվ յերկիրը մեր դարձել է դրախտ,
Կյանքը յերջանիկ ու լուսակարկաչ.
Յերեկվա դալուկ դեմքերին վհատ,—
Արևն է ժպտում շողերով կակաչ...

Յերեկվա արնոտ մեր հողի վրա,
Հասուն մրգերի այգիներն առատ.
Այն սարսափահար ճամպեղի վրա,—
Հոգն է սվավում, անուշ ու մարմանդ...

Հովվի սրինդն է քաղցր կարկաչում,
Հանդ ու արոտից, լանջերից հեռու.
Արծաթշող առուն է մեղմ խոխովում,—
Մանուկներն ափին-զրկում իրարու...

Բարձրանում են հա զիգանդները մեր,
Ակնթարթն հազար կյանքեր է յերկնում.
Մարմար սյուներով վորքան պալատներ,—
Վորքան քաղաքներ կա մեր նոր յերկրում...

Աշխատանքը վոնց, փրփրադեղ մի ծով,
Իր գիրկն ե բացել մեր աղջիկներին.
Թեվ-թիկունք առած յերկրի վերելքով,—
Ժպիտն ե փթթել նրանց շուրթերին...

Այսպես ե հիմա մեր յերկիրը նոր,
Բուրաստաներով, շողերով լեցուն.
Հաղթ բազաների շարքերով հզոր—
Խնդուն դեմքերով, սրտերով ցնծուն...

Ել վսչ մի սելավ մեզ մոտ չի հորդի,
Պատնեշները մեր, ամուր ու կանգուն.
Կռիվ չենք ուզում... բայց պատրաստ մարտի,
Բանակներ ունենք անպարտ ու արթուն...

Դե՛հ արիացեք, դուք ել մեզ նման,
Ո՛ր սպանացի մայրեր տառապած.
Թեվ-թիրկունք ավեք ձեր զավակներին,
Թող փշրեն շղթան բռնության դաժան...

Վաղ-ուշ մեր յերկրի արևը ալ-վարդ,
Պիտ շողա յերկրում ձեր ցավոտ ու մութ.
Մեր ազատաբեր հոկտեմբերն հրատ,—
Պիտ իր գիրկն առնի ձեր աշխարհն արնոտ

1936 թ.

ՅԵՐԿՈՒ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Իմ անուշ բալիկ,
Յերանի թե յես,
Լինելի փոքրիկ
Մի մանկիկ քեզ պես:
Ապրելի կյանքով
Քո այդ մտնկական,
Քո զվարթ յերգով
Ժպտով դյուրեկան.
Ուր Ստալինյան
Նոր որենքն արդար՝
Թե տվեց մարդուն
Ու միտք մի պայծառ
...Իմ մանկությունը
Ուրիշ ե յեղել,
Իմ մանկությունը
Յավով ե անցել:
Քեզ նման ուրախ,
Յերջանիկ կյանքով
Ու սրտով խաղաղ
Ձե՛մ ապրել յերբեք:
Լաց ու հառաչանք,
Ու անիս եմ լսել.
Ծեծ ու հալածանք,
Ջրկանք եմ տեսել:
Ապրել եմ ցածրիկ
Հողե խրճիթում,
Որերս ծաղիկ,
Մաշել եմ մթում...
Իմ աչքերի դեմ
Հորդել ե արյուն.
Ո՛ր—վորքան գիտեմ,—
Ավեր գյուղ ու տուն...

Այդ պատերազմի՛
 Արհավիրքն եր սե,
 Մորիկ ու քամի
 Ու մարդիկ անթե:
 Բռնութեան դաժան
 Շշթան եր զնգում.
 Բանտ ու կախաղան
 Ու աքսոր դժգուշ...
 Ո՛ր, սոսկում եյի
 Յես կյանքից այդ մութ
 Սրթսրթում եյի,—
 Շուրթերով կապույտ...
 Յեվ վորքան ել քեզ
 Պատմեմ անցյալից,
 Բալիկ լուսերես,
 Չես հասկանա ինձ,
 Ու չես թափանցի
 Հատակը հոգուս,
 Ուր կան հարվածի
 Սպիներ մահու:
 Յեվ դու, ո՛ր, յերբեք,
 Յերբեք չես տեսնի
 Այն արյունաներկ
 Աշխարհը դժնի:
 Իմ մանկությունը
 Ուրիշ ե յեղել,
 Իմ մանկությունը
 Ցավով ե անցել:
 Իսկ դու իմ բալիկ,
 Յերջանիկ այնքան,
 Բնքուշ ու զոդտրիկ
 Ծաղիկ ես արվան:
 Այս ո՞րն ես շնչում,
 Ուր չկա կսկիծ,
 Ուր ամեն ինչում
 Թափ կա ու թռիչք,

Փայփայանք ու սեր
 Խնամք անսահման,
 Հույսեր ու հույզեր,
 Լույսեր կա այնքան:
 Դու ապրում ես նոր
 Մի նոր աշխարհում,
 Աշխարհում բոսոր
 Ու հրավառուն,
 Ուր զեղատեսիլ
 Ծաղիկներ կան շատ,
 Ակունքներ կան բլի
 Ու կյանք մի ազատ.
 Ուր վոր յերազուն
 Ասողեր են ժպտում,
 Յերկինքը՝ լազուր,
 Զրերն են հորդում.
 Ուր այրոների
 Յերամներն հազար,
 Զինջ կապույտների
 Բողով պարուրված,
 Պայքարում են խենթ
 Մրրիկների դեմ
 Յեվ հաղթում են միշտ
 Վեհ ու ժպտադեմ.
 Ուր բարձրանում են
 Գիգանտներ հազար,
 Պալատներ կանգուն,
 Սյուններով՝ մարմար.
 Ու մարդու միտքը,
 Ել կանգ չի առնում,
 Ել չկա հինը,
 Միշտ նորն ե ծնվում.
 Ուր Ստալինյան
 Նոր որենքն արդար—
 Թե՛ տվեց մարդուն
 Ու միտք մի պայծառ:

Իմ մանկությունը
 Նւրիշ ե յեղել,
 Իմ մանկությունը
 Ցավով ե անցել:
 Քո նոր աշխարհում,
 Քեն ու վոխ չկա.
 Աղգներն համերաշխ
 Մերով են հիմա:
 Բոլորն ել մեկ սխիւտ,
 Մեկ հոգի դառած,
 Դեմքերին ժպիտ
 Ու խի՛նդ կա փռած:
 Փաթման սւ վարթին,
 Դաթոն ու Շնկան
 Իրար մտերիմ
 Ու մոտ են այնքան:
 Մեկ են բարախում
 Սրտերը նրանց.
 Մեկտեղ են խաղում
 Հրճվանքով անանց,
 Թերթում մեր դարի
 Այս գիրքն իմաստուն,
 Ու կարդում յերկրի
 Հանճարեղ մարդուն,
 Լիցք առնում նրա
 Վեհ պատգամներով,
 Վոր գրել ե նա՝
 Անմահ տողերով:
 Այսպես, իմ բալիկ,
 Մանկությունը քո
 Հրաշող ծաղիկ,—
 Այս յերկնի ներքո...
 Ուր հզորագոր
 Մարտերում կռիված՝
 Դարբինն ե այսոր
 Քեզ իր գիրկն առած—

Տանում հաղթական
 Դազաթները սեգ...
 Նշում արեկա
 Մեր ուղին լուսն,
 Ուր սոցիալիզմի
 Շենքն ե բարձրանում
 Աշխարհով մի,—
 Մեր այս գլխարթուն:
 Հավատում եմ քեզ,
 Բալիկ իմ անդին,
 Վոր դու պիտ լինես
 Հերոսն որերի:
 Կուրծքդ դեմ տված
 Յեկնես պայքարի,
 Վորպես վեհապանծ
 Զինվոր մի արի:
 Ու յերդում պիտ տաս
 Հանճարեղ մարդուն,
 Յերկրիը սրբազան
 Հսկես միշտ արթուն:
 Մեր պարիսպների
 Հաղթ դարբաններից,
 Վոր ներս չսողան
 Նենգ ու թունալից
 Իժեքը դաժան:
 Ու հիմա վորքան
 Կուզեն թող վռնան,
 Թող ճոճեն ժահրոտ
 Սրերը արնոտ.
 Փույթ չե տակավին,
 Քանզի քեզ նման
 Դեռ քանի՜ քանի՜
 Մանուկներ պիտ գան,
 Պիտ գան ու խնդան
 Այս արևի տակ,
 Աշխարհում այս լայն

Ու հավերժական:
 Հավատան և դժու,
 Մանկիկ իմ անուշ,
 Վոր յերկրում հեռու՝
 Պիտ վառվին մի որ
 Մեծ հոկտեմբերյան
 Զահերը բոսոր,
 Շողոն արեգական:
 Ու ապրեն պիտի
 Բոլորն ել քեզ պես,
 Մանուկներն ի մի,
 Սրտերով հրկեզ:
 Հրաշքներ գործող
 Մեր կյանքը բողբոջ
 Պիտ իր գի՛րկն առնի
 Յերկրագունդը վողջ:
 Իմ սիրուն բալիկ,
 Յերանի թե յես
 Լինեյի փոքրիկ
 Մի մանկի՛կ քեզ պես,
 Լինեյի գողտրիկ
 Մի հոկտեմբերիկ,
 Բյուրեղյա, հստակ
 Այս յերկնքի տակ,
 Ուր Ստալինյան
 Նոր որե՛նքն արդար՝
 Թե՛ տվեց մարդուն
 Ու մի՛տք մի պայծառ:

1936 թ.

Յ Ա Ն Կ

- 1) — Յերազ մանուկս
- 2) — Սպասում
- 3) — Յես մայր եմ դառել
- 4) — Պարուրում եմ
- 5) — Աղջիկս քնքուշ
- 6) — Անուշ բալիկ
- 7) — Մուշ-մուշ
- 8) — Նոր ե բացվել
- 9) — Ձի յես քշում
- 10) — Աղջիկ ունեմ
- 11) — Յերբ չես լինում
- 12) — Մոր սրտի պես
- 13) — Իմ փոքրիկ աղջիկ
- 14) — Իմ մայրն ել
- 15) — Բուրաստանն իմ
- 16) — Նոր որոր
- 17) — Դուք այնպես լավն եք,
- 18) — Յերեք լալա
- 19) — Գեղջկուհու յերգը
- 20) — Իմ բալիկ
- 21) — Քեզ եմ հիշելու
- 22) — Հոկտեմբերիկ իմ բալիկ
- 23) — Չարթնիր քնից
- 24) — Դու յերջանիկ
- 25) — Մանուշակներ
- 26) — Իմ յերեխան
- 27) — Քնիր անուշ
- 28) — Իմ աղջկան
- 29) — Իմ մանկան
- 30) — Իմ ծաղիկներ
- 31) — Մտերիմ խոսքեր
- 32) — Իմ լեյտենանտին
- 33) — Մանուկներին
- 34) — Սպանացի մայրերին
- 35) — Յերկու մանկություն



ՀՀ Ազգային գրադարան



NL0321399

~~15~~

375

9m

1
2

891.99

u-46

VARSENIQ AQIASJAN

ANALBQ DUJOJULARB

AZƏRNƏŞR
Bakı — 1937

19391